Միավորված ազգերի կազմակերպություն CRPD/C/ARM/CO/1

Կոնվենցիա հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին

8 մայիսի 2017
Ոչ պաշտոնական թարգմանություն
Բնօրինակն՝ անգլերեն
«Դիսըբիլիթի ինֆո» ՀԿ

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե

Եզրափակիչ դիտարկումներ Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ*

I. Ներածություն

1. Կոմիտեն քննարկեց Հայաստանի նախնական զեկույցը (CRPD/C/ARM/1) իր 312-րդ և 313-րդ հանդիպումների ընթացքում (տե՛ս CRPD/C/SR.312 և 313), որոնք, համապատասխանաբար, տեղի են ունեցել 2017 թվականի մարտի 29-ին և 30-ին, և ընդունեց հետևյալ եզրափակիչ դիտարկումները 2017 թվականի ապրիլի 7-ին 325-րդ հանդիպմանը:

2. Կոմիտեն ողջունում է Հայաստանի նախնական զեկույցը, որը պատրաստվել է Կոմիտեի զեկուցման ուղեցույցի համաձայն, և շնորհակալություն է հայտնում մասնակից պետությանը Կոմիտեի մշակած հիմնախնդիրների ցանկին (CRPD/C/ARM/Q/1) գրավոր պատասխանելու համար (CRPD/C/ARM/Q/1/Add.1):

3. Կոմիտեն գնահատում է արդյունավետ երկխոսությունը մասնակից պետության ներկայացուցչական պատվիրակության հետ և ողջունում է մասնակից պետությանը իր պատվիրակության ուժի համար, որում ընդգրկված էին ներկայացուցիչներ համապատասխան նախարարություններից և գերատեսչություններից: Կոմիտեն ողջունում է պատվիրակությանը Կոմիտեի անդամների հարցերին անկեղծ պատասխանելու համար:

* Ընդունվել է Կոմիտեի կողմից 17-րդ նստաշրջանում (20 մարտ-12 ապրիլ 2017):

II. Դրական կողմեր

4. Կոմիտեն ողջունում է մասնակից պետության ջանքերը, որոնք ուղղված են եղել հաշմանդամություն ունեցող անձանց՝ Կոնվենցիայում ամրագրված իրավունքների իրացումն ապահովելուն:

Մասնավորապես, ողջունում է՝

1) 2014 թվականին «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որն ապահովում է հաշմանդամություն ունեցող երեխաների հանրակրթության անցումը համընդհանուր ներառական կրթության համար մինչև 2025 թվականը,

2) 2016 թվականին «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որը նպատակ ունի բարձրացնելու հանրային տրանսպորտի ֆիզիկական մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար,

3) 2017 թվականին «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների համալիր ծրագրի» ընդունումը,

4) Կառավարության նախաձեռնությունը՝ 2016 թվականը Հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների տարի հռչակելու վերաբերյալ:

III. Մտահոգությունների և առաջարկությունների հիմնական ոլորտները

Ա. Ընդհանուր սկզբունքներ և պարտավորություններ (հոդված 1-4)

5. Կոմիտեին մտահոգում են՝

1) հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների հետ անբավարար և ընտրողաբար խորհրդակցությունների անցկացումը, ներառյալ՝ համապատասխան աջակցության և ողջամիտ հարմարեցումների բացակայությունը հաշմանդամությանն առնչվող օրենսդրությունը, քաղաքականությունները, ռազմավարություններն ու գործողությունների պլանները մշակելիս,

2) հաշմանդամության կանխարգելման և բուժման հասկացությունների կիրառումը Սահմանադրության փոփոխված

տարբերակում (հոդված 48) և նոր ընդունված «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների համալիր ծրագրում»,

3) փաստը, որ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը չի համապատասխանում Կոնվենցիային, ներառյալ հաշմանդամության սահմանումը, հաշմանդամության կանխարգելման և բուժման հասկացությունները և անգործունակությունը,

4) փաստը, որ մասնակից պետությունը դեռևս չի վավերացրել Կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը,

5) բժշկական մոդելի վրա հիմնված հաշմանդամության ճանաչումը, որը հիմնվում է խանգարման վրա՝ առանց հաշվի առնելու սոցիալական խոչընդոտները և հասարակական մասնակցության համար անձնական պահանջները,

6) Հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատող հանրային ծառայողների ցածր իրազեկվածությունը նրանց իրավունքների մասին,

7) Հաշմանդամություն ունեցող անձանց ազգային հանձնաժողովի՝ Կոնվենցիայի իրականացման համար հստակ, արդյունավետ և թափանցիկ միջոցների բացակայությունը:

6. **Կոմիտեն առաջարկում է մասնակից պետությանը՝**

1) ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց՝ իրենց կազմակերպությունների միջոցով լիարժեք և արդյունավետ մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում և հաշմանդամությանն առնչվող օրենսդրությունը, քաղաքականությունները, ռազմավարությունները և գործողությունների պլանները մշակելիս: Մասնակից պետությունը պետք է տրամադրի անհրաժեշտ աջակցությունը և ողջամիտ հարմարեցումներ՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց ներկայացուցիչների խորհրդակցությունների գործընթացում, ներառյալ կանանց, երեխաների, փախստականների և ապաստան հայցողների, լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր անձանց, հոգեբանասոցիալական

և մտավոր հաշմանդամություն, լսողության և տեսողության խնդիրներ ունեցող, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող, գյուղաբնակ վայրերում ապրող և բարձր մակարդակի աջակցության կարիքում գտնվող անձանց մասնակցությունը,

2) վերանայել իր օրենսդրությունը և պլանները, որոնք առնչվում են հաշմանդամության կանխարգելմանը և բուժմանը և դրանք համապատասխանեցնել հաշմանդամության մարդու իրավունքների վրա հիմնված մոդելին,

3) վերանայել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ ապահովելու, որ այն համապատասխանում է Կոնվենցիային և Կոմիտեի ընդհանուր մեկնաբանություններին,

4) վավերացնել Կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը,

5) ընդունել հաշմանդամության՝ մարդու իրավունքների վրա հիմնված մոդելը և ապահովել, որ հաշմանդամության ճանաչումը կենտրոնացած է հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական մասնակցության արգելքների վրա և անդրադառնում է անհատական պահանջներին, կամքին և նախընտրություններին,

6) ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատող հանրային ծառայողների համար (ներառյալ ուսուցիչների, իրավապահների, դատավորների, իրավաբանների, բժշկական անձնակազմի) կանոնավոր դասընթացներ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին,

7) ամրապնդել Հաշմանդամություն ունեցող անձանց ազգային հանձնաժողովի կարողությունները՝ ապահովելու միջսեկտորային համակարգումը և հաշմանդամությանն առնչվող գործողությունների իրականացումը հանրային քաղաքականությունում:

Բ. Հատուկ իրավունքներ (հոդված 5-30)

Հավասարություն և անխտրականություն (հոդված 5)

7. Կոմիտեն մտահոգված է հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականությամբ: Մտահոգիչ է նաև, որ

1) բազմակի և հատվող խտրականության ձևերն արգելված չեն,

2) ողջամիտ հարմարեցումների հասկացությունը և նման հարմարեցումների տրամադրման մերժումը որպես խտրականության ձև ներառված չեն հակախտրականության օրենքներում,

3) հաշմանդամության հիմքով խտրականության դեպքերի և դրանց արդյունքների մասին հանրային հասանելի տեղեկատվության պակաս կա:

8. **Կոմիտեն առաջարկում է մասնակից պետությանը՝**

1) արագացնել հակախտրականության մասին օրենքի նախագծի ընդունումը և ապահովել, որ այն ներառի հանրային և մասնավոր սեկտորներում հաշմանդամության հիմքով խտրականության սահմանումը (ներառյալ բազմակի և հատվող խտրականության ձևերը, հատկապես՝ գենդերային հիմքով խտրականությունը) և հիմնել մեխանիզմներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խախտման դեպքերում կիրառելու պատժամիջոցներ,

2) ներառել ողջամիտ հարմարեցումների հասկացությունը հակախտրականության օրենսդրությունում և ճանաչել այդպիսի հարմարեցումների մերժումը որպես խտրականություն,

3) մատչելի ձևաչափերով հասանելի դարձնել հաշմանդամության հիմքով խտրականության դեմքերի և իրավական պաշտպանության միջոցների մասին տեղեկությունը, այդ թվում՝ հանցագործների դեմ պատժամիջոցների կիրառման և տուժողների փոխհատուցման մասին:

Հաշմանդամություն ունեցող կանայք (հոդված 6)

9. Կոմիտեն մտահոգված է, որ հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները բախվում են բազմակի և հատվող խտրականության ձևերի և

բացառման կյանքի բոլոր ոլորտներում: Մասնավորապես, Կոմիտեն մտահոգված է՝

1) հաշմանդամություն ունեցող կանանց անդրադարձի բացակայությամբ հաշմանդամությանը և գենդերին առնչվող ազգային օրենսդրությունում և քաղաքականություններում,

2) հաշմանդամություն ունեցող կանանց, հատկապես, հոգեբանասոցիալական և/կամ մտավոր հաշմանդամություն ունեցող կանանց, համար հիմնական ծառայությունների մատչելիության և ողջամիտ հարմարեցումների բացակայությամբ,

3) հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկներին գենդերային հիմքով բռնությունից, մասնավորապես, տանը և հաստատություններում, պաշտպանող օրենսդրության և համապատասխան կարգավորումների բացակայությամբ, ինչպես նաև զոհերի համար ապաստարանների և համապատասխան ծառայությունների բացակայությամբ,

4) անտեսման, բռնության, զսպման կամ մեկուսացման, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ սեռական չարաշահման դեպքերի հաստատունությամբ:

10. **Հղում անելով Թիվ 3 ընդհանուր մեկնաբանությանը (2016), որը հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների մասին է, և Կայուն զարգացման նպատակների 5.1, 5.2 և 5.5 թիրախների տեսանկյունից՝ Կոմիտեն առաջարկում է մասնակից պետությանը ուժեղացնել միջոցները՝ ուղղելով հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների նկատմամբ բազմակի և հատվող խտրականության ձևերին: Կոմիտեն նաև առաջարկում է՝**

1) ներառել հաշմանդամությունը կանանց և աղջիկներին առնչվող ազգային բոլոր օրենսդրություններում և քաղաքականություններում,

2) ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ բարձրացնելու հիմնական ծառայությունների մատչելիությունը և ողջամիտ հարմարեցումները հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների համար, ներառյալ ծառայությունների մատուցման ծրագրերի մշակման, իրականացման և մոնիթորինգի փուլերում հաշմանդամություն ունեցող

կանանց ներկայացնող կազմակերպությունների մասնակցության ապահովմամբ,

3) ուժեղացնել ջանքերը՝ զարգացնելու արդյունավետ համայնքահենք ծառայություններ հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների ապաինստիտուցիոնալացման առաջընթացի համար,

4) իրականացնել արդյունավետ իրավական, քաղաքական և գործնական միջոցներ՝ ուղղված գենդերային հիմքով հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ խտրականությանը (մասնավորապես նրանց, որոնք ապրում են հաստատություններում) կանխարգելմանը, հետաքննել նրանց մարդու իրավունքների խախտումները, դատական կարգով հետապնդել և պատժել պատասխանատուներին և ապահովել, որ տուժողներն ունենան անհապաղ պաշտպանության հնարավորություն, և մատչելի լինեն աջակցության ծառայությունները (այդ թվում՝ հիմնական ծառայություններից օգտվելիս ողջամիտ հարմարեցումները), ապաստարանների շենքերը, ինչպես նաև փոխհատուցման միջոցները,

5) վավերացնել Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան,

6) իրականացնել Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի եզրափակիչ դիտարկումներում առկա առաջարկությունները՝ կապված հաշմանդամություն ունեցող կանանց հետ (տե՛ս CEDAW/C/ARM/CO/5-6, պարբ. 27, 34-35 և 37):

Հաշմանդամություն ունեցող երեխաներ (հոդված 7)

11. Կոմիտեին մտահոգում են՝

1) մանկատներում կամ հատուկ հաստատություններում հաշմանդամություն ունեցող երեխաների մեծ թվի ինստիտուցիոնալացման մասին հաղորդումները, այդ թվում՝ տրանսինստիտուցիոնալացումը մեկ հաստատությունից մյուսը ապաինստիտուցիոնալացման քողի ներքո, և նման հաստատություններում շարունակական ներդրումները,

2) պետական աջակցության պակասը, ներառյալ վաղ միջամտությունը, հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին, և հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների շրջանում աղքատության բարձր մակարդակը (հատկապես՝ գյուղական և հեռավոր շրջաններում):

3) հաշմանդամություն ունեցող երեխաների որդեգրումը խթանելու և խրախուսելու միջոցառումների ոչ բավարար լինելը,

4) հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ անտեսման, բռնության և չարաշահման տարբեր ձևերի գոյությունը, ներառյալ ընտանիքում և հաստատություններում,

5) հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ վերաբերմունքի խարանումը:

12. **Կոմիտեն մասնակից պետությանն առաջարկում է՝**

1) առաջնային համարել ապաինստիտուցիոնալացումը հաշմանդամություն ունեցող բոլոր երեխաների համար և նրանց վերաբնակեցումը ընտանեկան միջավայրում, ներառյալ խնամակալության խթանումը և ծնողներին անհրաժեշտ համայնքահենք աջակցության տրամադրումը,

2) տրամադրել հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքների անդամներին անհրաժեշտ աջակցություն, ներառյալ վաղ միջամտություն, և իրականացնել հատուկ միջոցառումներ՝ կրճատելու նրանց շրջանում աղքատությունը,

3) խթանել հաշմանդամություն ունեցող երեխաների որդեգրումը և պատշաճ կերպով աջակցել,

4) արգելել և քրեականացնել հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ բռնությունը և նրանց շահագործումը բոլոր հաստատություններում, ներառյալ տանը և բնակելի հաստատություններում,

5) խթանել հաշմանդամություն ունեցող երեխաների դրական կերպարը,

6) իրականացնել Երեխաների իրավունքների հարցերով կոմիտեի եզրափակիչ դիտարկումներում ներառված առաջարկները (CRC/C/ARM/CO/3-4, պարբ. 36):

Իրազեկվածության բարձրացում (հոդված 8)

13. Կոմիտեն մտահոգված է հաշմանդամություն ունեցող անձանց ընդհանուր բացասական կերպարով և ծրագրերի բացակայությամբ՝ բարձրացնելու իրազեկվածությունը նրանց իրավունքների մասին, ինչպես նաև հաշմանդամության մասին մեդիայի լուսաբանմամբ, որը հիմնված է կարծրատիպերի վրա և հավերժացնում է հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքը:

14. **Կոմիտեն առաջարկում է մասնակից պետությանն իրականացնել իրազեկվածության բարձրացման համակարգային արշավներ, այդ թվում՝ մեդիա արշավներ, հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների մասնակցությամբ՝ պատկերելու հաշմանդամություն ունեցող անձանց կերպարը որպես մարդու իրավունքների կրողների:**

Մատչելիություն (հոդված 9)

15. Կոմիտեն մտահոգված է մասնակից պետությունում հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության բացակայությամբ: Կոմիտեն մտահոգված է մատչելիության առկա նորմերի պահպանման և ազգային օրենսդրությունում ստանդարտների բացակայությամբ, որոնք պետք է վերացնեն արգելքները և խոչընդոտները քաղաքաշինության, շինարարության և հանրային ծառայությունների, ինչպես տրանսպորտի, տեղեկատվության և հաղորդակցության ծառայություններում: Կոմիտեն նաև մտահոգված է, որ «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգիրքը չի նախատեսում պատժամիջոցներ մատչելիության նորմերի և ստանդարտների խախտման դեպքում, և որ չկան մեխանիզմներ պետական մակարդակում՝ ապահովելու այդ նորմերի և ստանդարտների իրականացումը:

16. **Կոմիտեն առաջարկում է մասնակից պետությանը՝**

1) ձեռնարկել բոլոր միջոցները՝ ապահովելու բոլոր ոլորտներում, ներառյալ քաղաքաշինության, շինարարության, հանրային ծառայությունների, այդ թվում՝ տրանսպորտի, տեղեկատվության և հաղորդակցության ծառայությունների, մատչելիության իրավական երաշխիքների իրականացումը,

2) վերացնել բոլոր խոչընդոտները շենքերում և հանրային ծառայություններում, ինչպիսիք են՝ տրանսպորտի, տեղեկատվության և հաղորդակցության ծառայությունները, ներառյալ համընդհանուր դիզայնի, բրայլի, ենթագրերի, ժեստերի լեզվի թարգմանության, հեշտ ընթերցվող ձևաչափերի և հաղորդակցության այլ մեթոդների խթանման միջոցով,

3) վերանայել «Վարչական իրավախախտումների մասին« ՀՀ օրենսգիրքը՝ ներառելու անհրաժեշտ պատժամիջոցներ մատչելիության նորմերի և ստանդարտների խախտման համար և ստեղծել մոնիթորինգի մեխանիզմ՝ հիմնված պետական մակարդակում զեկուցման համար, որը կապահովի այդպիսի նորմերի և ստանդարտների արդյունավետ իրականացումը,

4) ընդունել մատչելիության հստակ ժամկետներով ռազմավարություն և գործողությունների պլան, ապահովել դրա իրականացումը և մոնիթորինգը հաշմանդամություն ունեցող անձանց ներկայացնող կազմակերպությունների հետ սերտ խորհրդակցությունների միջոցով՝ համապատասխան Կոմիտեի մատչելիության մասին Թիվ 2 ընդհանուր մեկնաբանություն (2014) և Կայուն զարգացման նպատակների 9-րդ նպատակի, 11.2 և 11.7 թիրախների:

Վտանգավոր իրավիճակներ և արտակարգ հումանիտար իրավիճակներ (հոդված 11)

17. Կոմիտեն մտահոգված է, որ օրենսդրությունը, որոշումները և պլանները կապված վտանգավոր և արտակարգ հումանիտար իրավիճակների հետ հաշմանդամություն ունեցող անձանց պահանջները հաշվի չեն առնվում:

18. Կոմիտեն առաջարկում է մասնակից պետությանը ներառել հաշմանդամությունը վտանգավոր և արտակարգ հումանիտար իրավիճակներին առնչվող օրենսդրությունում, որոշումներում և

պլաններում, ձեռնարկել միջոցներ՝ համապատասխան Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի 2015-2030 թթ. գործողությունների ծրագրի:

Օրենքի առաջ հավասարությունը (հոդված 12)

19. Կոմիտեն մտահոգությամբ է նշում Սահմանդրությունում և «Քաղաքացիական դատավարության մասին» ՀՀ օրենսգրքում խտրական իրավական դրույթները, որոնք թույլ են տալիս հոգեբանասոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց զրկել գործունակության իրավունքից և նշանակել խնամակալ: Մտահոգիչ է նաև խնամակալի միջոցով որոշումների կայացման համակարգը որոշումների կայացման աջակցության համակարգով փոխարինելու մեխանիզմների բացակայությունը:

20. **Վկայակոչելով օրենքի առաջ հավասարության մասին ընդհանուր մեկնաբանություն 1-ը (2014)՝ Կոմիտեն առաջարկում է մասնակից պետությանը ուժը կորցրած ճանաչել Սահմանադրության և «Քաղաքացիական դատավարության» ՀՀ օրենսգրքի խտրական դրույթները և վերականգնել հաշմանդամություն ունեցող անձանց համար լիարժեք իրավունակությունը և ներկայացնել որոշումների կայացման աջակցության համակարգը:**

Արդարադատության մատչելիություն (հոդված 13)

21. Կոմիտեն մտահոգված է մասնակից պետության դատարանների մատչելիության ցածր մակարդակով, ներառյալ վարչական և նոտարական շենքերի մատչելիությամբ: Կոմիտեն մտահոգված է նաև արդար դատաքննությունն ապահովող իրավական երաշխիքներով և պատշաճ գործընթացների բացակայությամբ, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց (հատկապես՝ հոգեբանասոցիալական և/կամ մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց) դատական բոլոր գործընթացներում (ներառյալ ընթացակարգերի, գենդերին և տարիքին համապատասխան հարմարեցումների, այդ թվում՝ լսողության խնդիրներ ունեցող անձանց համար ժեստերի լեզվի թարգմանության, տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար իրավական և դատական տեղեկությունների և հաղորդակցության մատչելի ձևաչափերի ապահովման միջոցով) անվտանգ և լիարժեք մասնակցությամբ: Կոմիտեն մտահոգված է նաև հաշմանդամություն ունեցող

անձանց տրամադրվող իրավական մատչելի և գնային առումով հարմար ծառայությունների անբավարար հասանելիությամբ:

22. **Կոմիտեն առաջարկում է մասնակից պետությանը ապահովել, որ ընթացակարգային, գենդերին և տարիքին համապատասխան հարմարեցումները հիմնված են ազատ ընտրության և հաշմանդամություն ունեցող անձանց նախընտրության վրա, ստեղծել իրավական երաշխիքներ՝ խթանելու հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը բոլոր իրավական ընթացակարգերում մյուսների հետ հավասար հիմունքներով: Կոմիտեն նաև առաջարկում է մասնակից պետությանը ջանքեր գործադրել՝ իրականացնելու թրեյնինգներ և կարողությունների զարգացման ծրագրեր իրավապահների և հաշմանդամություն ունեցող անձանց համար Կոնվենցիայի վերաբերյալ՝ բարձրացնելու նրանց իրավական իրազեկվածությունը և ապահովելու անվճար իրավական աջակցություն: Կոմիտեն առաջարկում է մասնակից պետությանը ուղենիշ ընդունել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի իրականացումը և Կայուն զարգացման նպատակների 16.3 թիրախը:**

Անձի ազատությունը և անվտանգությունը (հոդված 14)

23. Կոմիտեին մտահոգում են՝

1) իրավական դրույթները, որոնք թույլ են տալիս հոգեբանասոցիալական և/կամ մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց երկարաժամկետ, երբեմն ամբողջ կյանքում, կամայական ազատությունից զրկումը, ներառյալ ոչ կամովին հոսպիտալացումը և հարկադիր ինստիտուցիոնալացումը, և հաստատություններում ազատությունից զրկված հաշմանդամություն ունեցող անձանց համար բավարար իրավական երաշխիքների և աջակցության բացակայությունը,

2) ազատազրկման վայրերում, մասնավորապես, բնակելի և քրեակատարողական հաստատություններում գերբեռնվածությունը, աղքատ կենսա- և սանիտարական պայմանները, ներառյալ՝ անհամապատասխան սնունդը,

3) ողջամիտ հարմարեցումների, այդ թվում՝ փաստաբանական աջակցության, բացակայությունը քրեակատարողական հիմնարկներում հաշմանդամություն ունեցող անձանց համար:

24. **Կոմիտեն առաջարկում է մասնակից պետությանը՝**

1) ուժը կորցրած ճանաչել և արգելել խանգարման հիմքով կալանավորումը, ներառյալ ոչ կամովի հոսպիտալացումը և հարկադիր ինստիտուցիոնալացումը, ինչպես նաև ոչ կոնսենսուսային հոգեբուժական բուժումը,

2) ապահովել, որ ազատազրկման բոլոր վայրերը, ներառյալ բնակելի, հոգեբուժական և քրեակատարողական հաստատությունները, մատչելի լինեն և ունենան մարդկային կենսապայմաններ՝ արձագանքող հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց կարիքներին,

3) ապահովել ողջամիտ հարմարեցումներ, ներառյալ փաստաբանական աջակցություն քրեակատարողական հիմնարկներում ապրող հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Խոշտանգումից և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից ազատությունը (հոդված 15)

25. Կոմիտեն մտահոգված է հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ հաստատություններում անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքով (այդ թվում՝ մտավոր և/կամ հոգեբանասոցիալական հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ մասնագիտացված հաստատություններում աշխատակազմի, խնամողների կամ այլ բնակիչների կողմից իրականացված), ինչպես նաև նրանց նկատմամբ որպես բուժման կամ պատժի միջոց անտեսման և ֆիզիկական զսպման կիրառումը: Կոմիտեն մտահոգված է նաև բողոքարկելու համակարգերի և հաստատություններում մոնիթորինգի անարդյունավետ և ոչ բավարար լինելու համար:

26. **Կոմիտեն առաջարկում է մասնակից պետությանը հարկադրանքից, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից պաշտպանել հաշմանդամություն ունեցող**

անձանց, հատկապես՝ մտավոր և/կամ հոգեբանասոցիալական հաշմանդամություն ունեցող երեխաներին, որոնք շարունակում են մնալ հաստատություններում, և արգելել բուժումն այդ բոլոր ձևերով: Կոմիտեն նաև առաջարկում է մասնակից պետությանը մշակել արդյունավետ հետաքննության և մոնիթորինգի համակարգ՝ կանխելու հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ հաստատություններում անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատժի բոլոր ձևերը, ապահովել այդ դեպքերի արագ հետաքննությունը:

Շահագործումից, բռնությունից և չարաշահումից ազատությունը (հոդված 16)

27. Կոմիտեն մտահոգված է հաստատություններում հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ բռնությունների և դաժան վերաբերմունքի դեպքերի բարձր ցուցանիշով, ներառյալ հաղորդված դեպքերը, որոնք հանգեցրել են հաշմանդամություն ունեցող երեխաների և չափահասների մահվան: Կոմիտեն նաև մտահոգված է հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային և սեռական շահագործմամբ:

28. **Կոմիտեն առաջարկում է մասնակից պետությանը ձեռնարկել օրենսդրական և գործնական միջոցներ՝ պաշտպանելու հաշմանդամություն ունեցող անձանց, ովքեր մնում են հաստատություններում, կանխել անտեսումը, բռնությունը, չարաշահումն ու շահագործումը և պայքարել դրանց դեմ: Կոմիտեն նաև առաջարկում է մասնակից պետությանը հետաքննել բռնության, շահագործման և չարաշահման դեպքերը և դատական կարգով հետապնդել հանցագործներին, տրամադրել կանոնավոր և պարտադիր թրեյնինգներ հաստատությունների անձնակազմի անդամներին՝ կանխելու հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ բռնությունը, շահագործումը և չարաշահումը: Կոմիտեն նաև առաջարկում է մասնակից պետությանը ապահովել արդյունավետ, անկախ, մարդու իրավունքների վրա հիմնված մոնիթորինգի մեխանիզմ բոլոր բնակելի և մասնագիտացված հաստատություններում հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ:**

Տեղաշարժվելու ազատությունը և քաղաքացիությունը (հոդված 18)

29. Կոմիտեն մտահոգված է այն կառուցվածքային խոչընդոտներով, որոնք խանգարում են հաշմանդամություն ունեցող անձանց անձնագիր և նույնականացման քարտ ձեռք բերել մյուսների հետ հավասար հիմունքներով:.

30. **Կոմիտեն առաջարկում է մասնակից պետությանը ձեռնարկել բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են ապահովելու, որ հաշմանդամություն ունեցող անձինք ձեռք բերեն անձնագրեր և նույնականացման քարտեր մյուսների հետ հավասար հիմունքներով, այդ թվում՝ տրամադրելով ողջամիտ հարմարեցումներ՝ մատչելի դարձնելու հանրային գրասենյակները և անձնագրերի տրամադրման ընթացակարգերը:**

Անկախ ապրելու և համայնքում ներառված լինելու իրավունք (հոդված 19)

31. Կոմիտեն մտահոգված է ապաինստիտուցիոնալացման դանդաղ առաջընթացով և հաշմանդամություն ունեցող երեխաների և չափահասների մեծ թվով, որոնք ապրում են բնակելի հաստատություններում: Մտահոգիչ է նաև խիստ սահմանափակ աջակցությունը՝ ուղղված համայնքում անկախ ապրելուն:

32. **Կոմիտեն առաջարկում է մասնակից պետությանն արագացնել ապաինստիտուցիոնալացման գործընթացը և առանց հետաձգման իրականացնել դրա գործողությունների պլանը, ներառյալ՝ բոլոր հաստատությունների փակման ժամանակացույցը: Կոմիտեն նաև առաջարկում է մասնակից պետությանը ձեռնարկել իրավական միջոցներ և հատկացնել բավարար ռեսուրսներ աջակցության ծառայությունների զարգացման համար (այդ թվում՝ անձնական աջակցողի ծառայության, որը կհեշտացնի հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքը համայնքում): Կոմիտեն առաջարկում է, որ հաշմանդամություն ունեցող անձինք, իրենց կազմակերպությունների միջոցով, ներգրավվեն ապաինստիտուցիոնալացման բոլոր փուլերում (պլանավորում, իրականացում, գնահատում և մոնիթորինգ):**

Անհատական շարժունությունը (հոդված 20)

33. Կոմիտեն մտահոգված է շարժունությանն աջակցող սարքավորումների, այլ աջակցող տեխնոլոգիաների տրամադրման հասանելիության, աջակցության և անհատական մոտեցման, կյանքի աջակցության և միջնորդությունների բացակայությամբ:

34. **Կոմիտեն առաջարկում է մասնակից պետությանը ստեղծել մեխանիզմներ՝ հեշտացնելու հաշմանդամություն ունեցող անձանց որակյալ շարժունության, աջակցող սարքավորումներ, սարքեր և տեխնոլոգիաների ձեռքբերումը հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց համար հարմար արժեքով՝ հաշվի առնելով նրանց անհատական պահանջները:**

Արտահայտման և կարծիքի ազատությունը և տեղեկատվության մատչելիությունը (հոդված 21)

35. Կոմիտեն մտահոգված է, որ տեղեկատվության և հաղորդակցության մատչելիությունը խիստ սահմանափակ է հաշմանդամություն ունեցող անձանց համար և որ

1) ժեստերի լեզվի դասընթացներն անարդյունավետ են, որ հանրային և մասնավոր ծառայություններում ժեստերի լեզվի թարգմանիչների թիվն անբավարար է, և որ բացակայում են լսողության խնդիրներ ունեցող անձանց համար ենթագրերով հեռուստատեսային հաղորդումները,

2) մասնավորապես տեսողության խանգարումներ և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները և մատչելի ձևաչափերը, այդ թվում՝ հեշտ ընթերցվող ձևաչափը և ինտերնետային կայքերը, խիստ սահմանափակ են, և որ բրայլի կիրառումը սահմանափակվում է հատուկ առանձնացված հաստատություններով,

3) մասնակից պետությունում ժեստերի լեզուն ճանաչված չէ որպես պետական լեզու:

36. **Կոմիտեն մասնակից պետությանն առաջարկում է՝**

1) ներդրումներ անել ժեստերի լեզվի թարգմանիչների համակարգային թրեյնինգների կազմակերպման մեջ և տրամադրել ժեստերի լեզվի թարգմանություն, հանրային և մասնավոր ծառայություններում ապահովել, որ հեռուստատեսային հաղորդումները պատշաճ կերպով թարգմանվեն և ենթագրվեն լսողության խնդիրներ ունեցող անձանց համար,

2) ընդունել մատչելի տեղեկատվության և հաղորդակցության ձևաչափեր և տեխնոլոգիաներ (այդ թվում՝ կայքերի մատչելիությունը, բրայլը, հեշտ ընթերցվող և պարզեցված ձևաչափերը), որոնք կհամապատասխանեն հաշմանդամություն ունեցող անձանց հանրային բոլոր ծառայություններում,

3) ճանաչել ժեստերի լեզվի կիրառումը որպես պաշտոնական հարաբերությունների լեզու:

Անձնական կյանքի նկատմամբ հարգանքը (հոդված 22)

37. Կոմիտեն մտահոգված է, որ հաշմանդամություն ունեցող երեխաները հանրայնորեն ներկայացվում են բժշկական և բարեգործական նպատակներով:

38. **Կոմիտեն առաջարկում է մասնակից պետությանը պաշտպանել հաշմանդամություն ունեցող բոլոր երեխաների գաղտնիության իրավունքը, մասնավորապես՝ իրենց անձնական կյանքի, առողջության, վերականգնման կարգավիճակի համատեքստում:**

Տան և ընտանիքի նկատմամբ հարգանքը (հոդված 23)

39. Կոմիտեն մտահոգված է Ընտանեկան օրենսգրքի դրույթով, որով տարբեր խանգարումներ ունեցող մարդիկ չեն կարող որդեգրել երեխաներ, ստանձնել ծնողական իրավունքներ, ինչպես նաև, որ այն խոչընդոտում է անգործունակ ճանաչված մարդկանց ամուսանանալ: Մտահոգիչ է նաև հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիքներին տրամադրվող ծառայությունների բացակայությունը:

40. **Կոմիտեն առաջարկում է մասնակից պետությանը ձեռնարկել միջոցներ (ներառյալ օրենսդրության ուժը կորցրած ճանաչելը), որոնք անհրաժեշտ են վերացնելու համար ամուսնության, ընտանիքի և**

ծնողական իրավունքների մասով խտրականությունը հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ: Կոմիտեն նաև առաջարկում է մասնակից պետությանը բարելավել աջակցության ներառական միջոցառումները, որոնք անհրաժեշտ են (ներառյալ անձնական աջակցողի հասանելիությունը և հիմնական ծառայությունները) այն ընտանիքների համար, որոնք ունեն հաշմանդամություն ունեցող անդամ ապահովելու բավարար աջակցությունը:

Կրթությունը (հոդված 24)

41. Կոմիտեն մտահոգված է, որ չնայած ներառական կրթության աճող միտմանը, հաշմանդամություն ունեցող բազմաթիվ երեխաներ սովորում են տարանջատված կրթական համակարգերում և չեն ստանում այն աջակցությունը, որն անհրաժեշտ է ներառական կրթության մեջ ընդգրկվելու համար: Կոմիտեն մտահոգված է հաշմանդամություն ունեցող երեխաների համար հանրակրթական դպրոցների մատչելիության և ողջամիտ հարմարեցումների, ինչպես նաև վարչական և ուսումնական կազմի՝ ներառական կրթության մասին ոչ բավարար աջակցության և դասընթացների բացակայությամբ: Կոմիտեն մտահոգված է ներառական կրթությունը քաղաքներում և գյուղական վայրերում խթանող համապարփակ ռազմավարության բացակայությամբ:

42. **Վկայակոչելով ներառական կրթության մասին Թիվ 4 ընդհանուր մեկնաբանությունը (2016) և Կայուն զարգացման նպատակներից 4-րդը (հատկապես 4.5 և 4 (a) թիրախները)՝ Կոմիտեն առաջարկում է մասնակից պետությանը ավելացնել ներառական կրթությանն ուղղված ջանքերը.**

1) ուժեղացնել ջանքերը՝ իրագործելու «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը՝ ապահովելու ներառական կրթության համակարգը բոլոր մակարդակներում մինչև 2025 թվականը,

2) ապահովել մատչելիություն և հատկացնել ռեսուրսներ, որոնք անհրաժեշտ են երաշխավորելու համար ողջամիտ հարմարեցումներ, որոնք կհեշտացնեն հաշմանդամություն ունեցող անձանց (ներառյալ այն մարդկանց, ովքեր ապրում են մարզերում և գյուղական համայնքներում)

մուտքը ներառական և որակյալ կրթություն, այդ թվում՝ նախադպրոցական և երրորդային կրթություն,

3) անցկացնել դասընթացներ ներառական կրթության մասին և դրանց անցկացումը պարտադիր դարձնել վարչական և ուսուցչական կազմի համար:

Առողջությունը (հոդված 25)

43. Կոմիտեն մտահոգված է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին բժշկական մասնագետների իրազեկվածության ցածր մակարդակով, և որ առողջապահական ծառայությունները և շենքերը (ներառյալ արտակարգ իրավիճակների ծառայությունները և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման, բուժման, խնամքի և աջակցության ծրագրերը) մնում են անմատչելի և անհասանելի հաշմանդամություն ունեցող շատ անձանց համար, հատկապես գյուղական վայրերում: Կոմիտեն մտահոգված է նաև հաշմանդամություն ունեցող կանանց տրամադրվող բժշկական ծառայությունների և շենքերի մատչելիության բացակայությամբ, մասնավորապես՝ սեռական և վերարտադրողական առողջության ոլորտում:

44. **Կոմիտեն առաջարկում է մասնակից պետությանը՝**

1) անցկացնել բժշկական մասնագետների համար վերապատրաստման դասընթացներ և էթիկայի ստանդարտներ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ,

2) երաշխավորել առողջապահական ծառայությունների (ներառյալ արտակարգ իրավիճակների ծառայությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման, բուժման, խնամքի և աջակցության ծրագրերը) հասանելիությունը և մատչելիությունը հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց համար ամբողջ երկրում,

3) ձեռնարկել միջոցներ՝ ապահովելու, որ հաշմանդամություն ունեցող կանայք օգտվեն մատչելի բժշկական ծառայություններից (ներառյալ սեռական և վերարտադրողական առողջության ոլորտում) և շենքերից:

Վերականգնումը (Habilitation and rehabilitation) (հոդված 26)

45. Կոմիտեն մտահոգված է մասնակից պետությունում հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնման ծառայությունների և ծրագրերի բավարար չափով իրավահենք չլինելով: Կոմիտեն մտահոգությամբ նշում է, որ հաշմանդամություն ունեցող երեխաների ավելի քան կեսը չի օգտվում անհատական վերականգնողական ծրագրերից:

46. **Կոմիտեն առաջարկում է մասնակից պետությանը ստեղծել մատչելի, համապարփակ վերականգնողական ծառայությունների ծրագրեր (ինչպիսին վաղ միջամտությունն է)՝ տրամադրելով համապարփակ, բազմադիսցիպլինար և անհատական աջակցություն հաշմանդամություն ունեցող անձանց (հատկապես կանանց և երեխաներին):**

Աշխատանքն ու զբաղվածությունը (հոդված 27)

47. Կոմիտեն մտահոգված է հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում զգալի գործազրկության ցուցանիշներով և անհրաժեշտ զբաղվածության քաղաքականության և ծրագրերի բացակայությամբ, որոնք կամբողջացնեն քվոտայի կիրառումը՝ հնարավորություն տալով հաշմանդամություն ունեցող անձանց արդյունավետ մասնակցել բաց աշխատանքային շուկային:

48. **Կոմիտեն առաջարկում է մասնակից պետությանը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներն ընդգրկել ազգային զբաղվածության քաղաքականությունում և ծրագրերում, բարեփոխել «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքը, ներառյալ պարտադիր քվոտաների, հանրային և մասնավոր սեկտորի գործատուներին խրախուսելու միջոցառումների մասով: Կոմիտեն նաև առաջարկում է մասնակից պետությանը Կոնվենցիային համապատասխան և Կայուն զարգացման նպատակների 8.5 թիրախի տեսանկյունից աջակցել հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությանը բաց աշխատանքային շուկայում, ներառյալ մասնագիտական վերապատրաստումների ծրագրերի և շուկայական սեկտորում ողջամիտ հարմարեցումների տրամադրման միջոցով:**

Բավարար կենսամակարդակ ու սոցիալական պաշտպանությունը (հոդված 28)

49. Կոմիտեն մտահոգված է, որ հաշմանդամություն ունեցող անձանց մեծամասնությունը ապրում է աղքատության մեջ, ներառյալ գյուղական և հեռավոր վայրերում ապրողները, և որ առկա սոցիալական նպաստները բավարար չեն կենսապայմանների համար նվազագույն անհրաժեշտի և հաշմանդամության հետ կապված հավելյալ ծախսերի համար: Կոմիտեն նաև մտահոգությամբ նշում է, որ մասնակից պետությունը չի ձեռնարկել բավարար միջոցներ՝ բարձրացնելու սոցիալական պաշտպանության ծրագրերի մատչելիությունը, ներառյալ հանրային բնակարանների ապահովումը:

50. **Կոմիտեն առաջարկում է մասնակից պետությանը երաշխավորել հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց բավարար կենսապայմանները, ներառյալ համապատասխան թոշակների և սոցիալական նպաստների միջոցով՝ երաշխավորելու, որ սոցիալական պաշտպանության և աղքատության կրճատման ծրագրերը հաշվի են առնում հաշմանդամությամբ պայմանավորված հավելյալ ծախսերը, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձինք հնարավորություն ունենան օգտվել հիմնական ծառայություններից և հանրային բնակարանային ապահովման ծրագրերից: Կոմիտեն նաև առաջարկում է մասնակից պետությանը ուշադրություն դարձնել կոնվենցիայի 28-րդ հոդվածի և Կայուն զարգացման նպատակների 1.3.1 թիրախի միջև կապերին:**

Հանրային և քաղաքական կյանքին մասնակցությունը (հոդված 29)

51. Կոմիտեն մտահոգված է, որ հաշմանդամություն ունեցող անձինք չեն մասնակցում ընտրական գործընթացներին մյուսների հետ հավասար հիմունքներով, ինչը ընտրատեղամասերի անմատչելիության, աջակցության ծառայությունների բացակայության և ընտրություններին առնչվող տեղեկատվության մատչելիության ձևաչափերի բացակայության հետևանք է: Մտահոգիչ է նաև հաշմանդամություն ունեցող անձանց, հատկապես հաշմանդամություն ունեցող կանանց, ցածր մասնակցությունը հանրային և քաղաքական կյանքում որոշումների կայացմանը:

52. Կոմիտեն առաջարկում է մասնակից պետությանը ձեռնարկել օրենսդրական և այլ միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են հնարավորություն ընձեռելու համար հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց մասնակցել հանրային և քաղաքական կյանքին (ներառյալ ընտրելու և ընտրվելու իրավունքը), ապահովել, որ ընտրական գործընթացները, վայրերը և միջոցները մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց, խթանել հաշմանդամություն ունեցող անձանց, հատկապես կանանց, մասնակցությունը հանրային որոշումների կայացմանը:

Մասնակցությունը մշակութային կյանքին, հանգստին, ժամանցին և սպորտին (հոդված 30)

53. Կոմիտեն մտահոգված է հաշմանդամություն ունեցող անձանց, ներառյալ հաշմանդամություն ունեցող երեխաների (հատկապես գյուղական վայրերում ապրող) սպորտի և մշակութային գործունեության և միջոցառումների մատչելիության և նրանց մասնակցության սահմանափակ լինելով: Կոմիտեն նաև մտահոգված է, որ մասնակից պետությունը դեռևս չի վավերացրել «Մարաքեշի պայմանագիրը՝ դյուրացնելու տպագիր աշխատանքների մատչելիությունը այն անձանց համար, ովքեր կույր են, տեսողության խնդիրներ կամ այլ տպագրական հաշմանդամություն ունեն»:.

54. Կոմիտեն առաջարկում է մասնակից պետությանը ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ հաշմանդամություն ունեցող անձինք հնարավորություն ունենան ակտիվորեն մասնակցելու մշակութային և սպորտային գործունեությանը, ունենան հավասար մուտք շենքեր և ծառայություններ (այդ թվում՝ գրադարաններ, սպորտային և մշակութային միջոցառումներ և շենքեր): Կոմիտեն առաջարկում է պետությանը ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ առանց ուշացման վավերացնելու և իրականացնելու Մարաքեշի պայմանագիրը:

Գ. Հատուկ պարտականություններ (հոդված 31-33)

Վիճակագրությունն ու տվյալների հավաքումը (հոդված 31)

55. Կոմիտեն մտահոգությամբ նշում է մասնակից պետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավիճակի վերաբերյալ տարանջատված վիճակագրական տվյալների պակասի մասին, որը խոչընդոտում է Կոնվենցիայի արդյունավետ իրականացումը:

56. Կայուն զարգացման նպատակների 17.18 թիրախի տեսանկյունից Կոմիտեն առաջարկում է մասնակից պետությանը մշակել համակարգային տվյալների հավաքման և զեկուցման ընթացակարգեր, որը կհամապատասխանի Կոնվենցիային, առաջարկում է հավաքել, վերլուծել և տարածել տարանջատված տվյալներ հաշմանդամություն ունեցող բնակչության բնութագրերով (ներառյալ սեռով, տարիքով, ազգությամբ, խանգարման տեսակով, սոցիալ-տնտեսական կարգավիճակով, աշխատանքով, բնակության վայրով, ինչպես նաև արգելքներով, որոնց հանդիպում են հաշմանդամություն ունեցող մարդիկ հասարակությունում):

Ներպետական կիրարկումը և մոնիթորինգ (հոդված 33)

57. Կոմիտեն մտահոգված է ազգային մոնիթորինգի մեխանիզմին տրամադրվող ռեսուրսների պակասով և հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների՝ մոնիթորինգի գործընթացում ոչ բավարար մասնակցությամբ:

58. Հաշվի առնելով Կոմիտեի Անկախ մոնիթորինգի շրջանակներում և Կոմիտեի աշխատանքներում մասնակցության ուղեցույցը (CRPD/C/1/Rev.1, annex) և խթանման և մարդու իրավունքների պաշտպանության համար ազգային հաստատությունների կարգավիճակին առնչվող սկզբունքները (Փարիզի սկզբունքները)՝ Կոմիտեն առաջարկում է մասնակից պետությանը տրամադրել անհրաժեշտ ֆինանսներ անկախ մոնիթորինգի մեխանիզմի գործունեության համար և ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք մասնակցությունը մոնիթորինգի գործընթացում:

IV. Շարունակականությունը և ընդլայնումը

Տեղեկությունների ընդլայնումը

59. Համաձայն կոնվենցիայի 35-րդ հոդվածի 2-րդ կետի՝ Կոմիտեն դիմում է մասնակից պետությանը 12 ամսվա ընթացքում տրամադրելու տեղեկություններ այն միջոցների մասին, որոնք ձեռնարկվել են՝ իրականացնելու Կոմիտեի 12-րդ (հաշմանդամություն ունեցող երեխաներ) և 32-րդ (անկախ ապրելը և համայնքում ներառված լինելը) պարբերությունների առաջարկությունները:

60. Կոմիտեն դիմում է մասնակից պետությանը իրականացնելու այս եզրափակիչ դիտարկումներում ներառված առաջարկությունները: Կոմիտեն առաջարկում է պետությանը արդի սոցիալ-հաղորդակցական ռազմավարությունների կիրառմամբ փոխանցել այս եզրափակիչ դիտարկումները կառավարությանը և խորհրդարանին, առնչվող նախարարությունների պաշտոնյաներին և տեղական իշխանություններին և մասնագիտական խմբերի անդամներին (ներառյալ կրթության, առողջապահության և իրավական մասնագետներին), մեդիային, որպեսզի նրանք նկատի ունենան և քայլեր ձեռնարկել:

61. Կոմիտեն խորապես խրախուսում է մասնակից պետությանը ներառել քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, հատկապես հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություններին, պարբերական զեկույցի ստեղծման աշխատանքներում:

62. Կոմիտեն դիմում է մասնակից պետությանը՝ լայնորեն տարածելու այս եզրափակիչ դիտարկումները (ներառյալ հասարակական կազմակերպությունների և հաշմանդամություն ունեցող անձանց ներկայացնող կազմակերպությունների, հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ընտանիքի անդամների շրջանում) ազգային և փոքրամասնությունների լեզվով, ներառյալ ժեստերի լեզվով, և մատչելի ձևաչափերով (այդ թվում՝ հեշտ ընթերցվող) և այն հասանելի դարձնել մարդու իրավունքների մասին կառավարության կայքում:

Հաջորդ զեկույցը

63. Կոմիտեն դիմում է մասնակից պետությանը՝ ներկայացնել երկրորդ և երրորդ համատեղ պարբերական զեկույցը ոչ ուշ քան 2020 թվականի հոկտեմբերի 21-ը, ներառել դրանում տեղեկություններ այս եզրափակիչ դիտարկումների իրականացման մասին: Կոմիտեն հրավիրում է մասնակից պետության ուշադրությունը վերոնշյալ զեկույցների՝ Կոմիտեի զեկուցման պարզեցված ընթացակարգով ներկայացնելու վրա, համաձայն որի Կոմիտեն ստեղծում է հիմնախնդիրների ցանկ մասնակից պետության զեկույցը քննելու ժամկետից առնվազն մեկ տարի առաջ: Մասնակից պետության՝ այդ հիմնախնդիրների ցանկին պատասխանները կազմում են իր զեկույցի մասը: